

«ԱՐԱԷՎ ՇԱԽԻՐԱՄ» ԱՌԱՍՊԵՆԻ ՄԻ ԱՐՉԱԳԱՆՔԸ
ԱՐԱԲ ՊԱՏՄԵՉ ՄԱՍՈՒԳՈՒ ՄՈՏ

Ա. Ն. ՏԵՐ-ՂԱՎՈՆԴՅԱՆ

Հին և միջնադարյան Հայաստանում բանավոր կերպով պատմվող Արա Գեղեցիկ և Շամիրամ առասպելը մեկն է ասորեստանյան թագուհու մասին գոյություն ունեցող գրույցների երկար շարքի, որը տարածված է եղել հին աշխարհի բազում երկրներում:

Հայոց Արա թագավորի և Շամիրամի մասին գրույցը մանրամասն ձևով պահպանվել է միայն Սուփսես հորենացու մոտ, իսկ այլալեզու մատենագիրներ տալիս են համառոտ տեղեկություններ:

Հին Արևելքում ծնունդ առած այս առասպելի մասին հնագույն գրավոր (մեզ հասած) աղբյուրը Գիոդորոս Սիկիլիացու (I դար մ. թ. ա.) երկն է, որը հետևյալն է պատմում¹։ Բարելոնի Նինոս արքան իր գործը բերեց Հայաստան և Երասափ աղցեց տեղի բնակչության վրա, գրավելով մի քանի քաղաքներ: Հայոց արքա Բարգանեսը (Βαργανης) հասկանալով, որ դիմադրելն անհնարին է, նվերներով ընդառաջ գնաց թշնամուն և հպատակություն հայտնեց: Նինոսը նույնպես զիջեց և ճանաչեց նրա իշխանությունը Հայաստանի վրա, պահանջելով միայն ուղարկել օգնական զնդեր և պարեն իր զորքի համար:

Ըստ Գիոդորոս Սիկիլիացու այս հատվածը (ինչպես նաև այլ մասեր) քաղված է մի քանի դար առաջ ապրած Կտեսիաս պատմիչից, որի երկը մեզ չի հասել: Հայոց թագավորի «Խարզանես» անունը Մ. Գարագաշյանի² կարծիքով պետք է լինի Վարդան անվան աղավաղումը: Հ. Աճառյանը³ իրավացիորեն մերժում է դա, մանավանդ որ այդ ձևով իրանական անուն գոյություն ունի⁴:

Շամիրամի անունը թեև վերևում չի հիշվում, սակայն մի ուրիշ տեղում Գիոդորոս Սիկիլիացին հաղորդում է, որ Շամիրամը Հայաստանի լեռներից մի հսկայական քար պոկեց, եզների ու չորիների միջոցով իջեցրեց գետի ափը, ապա նավերով բերել տվեց Միջագետք և այնտեղ կանգնեցրեց որպես հուշարձան⁵:

Նույն պատմիչը, թեև հակիրճ, այնուամենայնիվ ընդհանուր ձևով տալիս է Շամիրամի և Հայոց թագավորի մասին եղած գրույցի հիմնական բովանդակությունը՝ Ասորեստանի պատերազմը Հայոց թագավորի հետ և Շամիրամի շինարարական գործունեությունը Հայկական լեռնաշխարհում:

Սիկիլիացուց մի քանի դար հետո հայկական ժողովրդական այս առասպելը գտնում ենք Մովսես հորենացու մոտ:

Ասորեստանի թագուհի Շամիրամը գրոհում է Հայաստան, ցանկանալով իր-տոփոտ կամքին ենթարկել Հայոց թագավոր Արային: Մերժելով Շամիրամի ամուսնության առաջարկը, Արան կովի է դուրս գալիս և սպանվում: Շամիրամը փորձում է արալեզուների միջոցով վերակենդանացնել Արա Գեղեցիկին, բայց իզուր: Շամիրամը Հայաստանում կառուցում է Վան քաղաքը, ջրանցք փորում և այլն: Շամիրամն սպանվում է Հայաստանում իր որդու՝ Նինվասի ձեռքով⁶:

հորենացին Գիոդորոս Սիկիլիացու նման հաղթանակը տալիս է Ասորեստանին և նույնիսկ ավելի առաջ գնալով պատմում է, որ Հայոց թագավորն այդ կովում սպանվեց: հորենացու հա-

¹ Diodorus Siculus (Loeb Classical Library), London, 1960, book II, էջ 352

² Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, մասն Ա, Խիֆլիս, 1895, էջ 39:

³ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Երևան, 1942, էջ 387:

⁴ F. Justi. Iranisches Namenbuch, Marburg, 1895, էջ 63:

⁵ Diodorus Siculus, II, էջ 389:

⁶ «Մովսեսի հորենացույ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 43—57:

դորդած հարուստ նյութը, բնականաբար, ժողովրդական առասպելների հետ սերտ առնչություն ունի:

Սակայն Գիտություն Սիկիլիացին և Մովսես Խորենացին «Արա և Շամիրամ» գրույցի միակ աղբյուրները չեն: Այս գրույցի մի շատ ինքնուրույն պատում մեզ հաղորդում է X դարի արար պատմիչ Մասուդին. այս պատումը նկատի չեն ունեցել «Արա և Շամիրամ»-ի ուսումնասիրողները (Մ. էմին, Մ. Արևդյան, Գ. Ղափանցյան և այլք): Ասորեստանի մասին խոսելիս Մասուդին գրում է՝ «Ապա Նինվեի (Նինաուա) ժողովուրդը իրենց վրա տիրակալ դարձրեց մի կնոջ, որին Սամիրամ էին կոչում: Սա իշխեց քառասուն տարի պատերազմելով Մոսուլի (Մասուլի) թագավորների դեմ և տիրեց Տիգրիսի (Գիջլա) ափից մինչև Հայաստան երկիրը (بلاد ارمينية) և Ատրպատականից (Աղարբայջան) մինչև Միջագետքի (Ջազիրա) սահմանը և Ջուզին ու Տիտեյ սարը մինչև Անձևացյաց (Ջաուազան) երկիրը և այլ մասեր Հայաստանից:

Իսկ Նինվեի ժողովուրդն այն է, ինչ մենք կոչել ենք Նարթ և Սիրիանի: (Սրանց) ծագումը ինչպես նաև լեզուն նույնն է: Նարթերի լեզուն մի քանի տառով տարբերվում է, իսկ [ընդհանրապես] նույն խոսվածքն է:

Այս կնոջից հետո իշխել է Արսիսը, որի մասին ասում են, որ նրա որդին էր: Սա իշխեց մոտավորապես քառասուն տարի: Նրա որոք ներխուժեցին հայերի թագավորները՝ (ملوك)

(ملوك) իսկ նրանք կոչվում էին փոփոխական հաջողությամբ: Սրանք հաղթեցին Նինվեի ժողովրդին և տեղի ունեցան պատերազմներ Հայաստանի ժողովրդի (اهل ارمينية) և Մոսուլի թագավորների միջև:

Ասվում է, որ սա Նինվեի թագավորներից վերջինն էր: Ասվում է, որ նրանից հետո քսան հոգի իշխեց և հարկ էին վճարում Հայոց թագավորին: Այդ թագավորների մասին ունենք տեղեկություններ, կենսագրություններ և պատերազմների նկարագրություններ, որոնց բոլորի շուրջը խոսել ենք մեր Ախրար ալ-Ջաման գրքում և սլ-Քիլար ալ-Աուսաթի մեջ:

Շամիրամի անվան Սամիրամ ձեր Մագուդու մոտ գրչական սխալ կարելի է համարել, քանի որ նրանից մեկ դար առաջ ապրած Յակուրին այն տալիս է Շամիրամ¹⁰ ձևով: Գուցե Մասուդուր¹¹ ազգրում տառերի փոքր շփոթություն է կատարվել, մանավանդ որ արարերենում շ-ն (ش) նույն թ (س) տառն է սոսկ երեք կետի ավելացմամբ:

Մասուդին¹² Նինվեի (նույնիսկ Մոսուլի) թագավորներ անվան տակ հասկանում է Ասորեստանի տիրակալներին, իսկ սիրիանի (ասորի) և Նարթ ասելով՝ ասորեստանցի և արամեացի ժողովրդին: Բնագրում հիշված Ջաուազանը (Անձևացիք) վերաբերում է ակնհայտորեն Հայաստանի Կորճայք նահանգին, որի Կորդուք գավառում էր գտնվում վերոհիշյալ Ջուդի¹² լեռը, այսինքն՝ Արարադը:

Առաջին հայացքից քիչ առեղծվածային է թվում հայկական հնադարյան ժողովրդական առասպելի գոյությունը Բագրատունյաց թագավորության ժամանակակից արար պատմիչի մոտ: Հարցի լուծման համար պետք է որոնել արար պատմագրության և մանավանդ Մասուդու աղբյուրները:

Արար պատմագրության առաջին կարևոր աղբյուրը իրանական պատմական գրույցներն են¹³, որոնք պահպանվել են «Խվաթայ նամակ»-ի (Տերերի գիրք) արարերեն թարգմանության միջոցով ներթափանցեցին արար մատենագրության (Յակուրի, Քարարի, Մասուդի) մեջ: Արարուրդ կարևոր աղբյուրը հրեական և ասորական նյութերն էին, որոնք նույնպես գտնվում են վերոհիշյալ պատմիչների երկերում: Հունական պատմագրությունը արար (մանավանդ մահմեդական) մատենագիրների համար բնիհանրապես աղբյուր չի եղել:

⁷ Մ. Արևդյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1899, էջ 511—515:

⁸ Maçoudi, Les prairies d'or, Paris, 1861, t. II, էջ 93:

⁹ Որոշ ձևագրերում միայն՝ «հայերը»: Տե՛ս Մասուդի, Մուրուջ ալ-գահար (արարերեն), Կահիրե, 1948, Ա, էջ 214:

¹⁰ Yaqubi. Tarih, Beyrouth, 1960, I, 81.

¹¹ F. Wustenfeld. Die Geschichtschreiber der araber und ihre Werke, Göttingen, 1882, էջ 38—40:

¹² G. L. Strange, The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1930, էջ 94:

¹³ X. A. P. Гибб, Мусульманская историография в кн. Арабская литература, М., 1960, էջ 128—130:

Նախաարարական շրջանի Հայաստանի պատմությունն արար մատենագրության մեջ քիչ է արտացոլվել: Աշխարհագետ իրն Խորղաղբեհի¹⁴, պատմիչներ Բայազուրիի ու Քարարիի մոտ կան որոշ կցկտուր տեղեկություններ Հայաստանի մարզպանական շրջանի վերաբերյալ: Ֆիրդուսու Շահնամեն, որի նյութը բանաստեղծը քաղել է Խվաթայ նամակից, քիչ է խոսում Հայաստանի մասին: Մասուդու հաղորդած այս բացառիկ տեղեկությունը շենք գտնում ոչ մի այլ արար մատենագրի մոտ:

Մասուդին¹⁵ քաղմաթիվ աշխատություններ է գրել, որոնք ինքը հիշում է: Նրա «Ախքար ալ-Ջաման» (Գի:ք ժամանակների պատմության) և «Ալ-Քիթար ալ-Աուսաթ» (Միջին դիրք) հսկայածավալ երկերը կորել են և մեզ հասել է սոսկ նրանց ամփոփումը՝ «Մուրուս ալ-Ջահաթ» (Ոսկու լվացատեղեր), որով նա հայտնի է արար մատենագրության մեջ: Ունի նաև մի փոքրիկ «Աշխարհագրություն»¹⁶:

Մուրուս ալ-Ջահաթի մեջ Մասուդին առատորեն օգտագործում է թե՛ իրանական պատմական գրույցներ, թե՛ հրեական ու քրիստոնեական (ասորական) պատմական ու ավանդական նյութեր: Նախքան Ասորեստանի և Բաբելոնի մասին խոսելը նա գրում է. «Այժմ խոսենք սիրիանի թագավորների մասին, որոնք առաջինն են հիշատակվում աստղաբանական աղյուսակների «արար» գիրք) և աշխարհի թագավորների պատմության գրքերի մեջ, հետո Մոսուլի և Նինվեի թագավորների և ապա Բաբելոնի թագավորների մասին»: Հետաքրքրական է, որ Մոսուլի ու Նինվեի բաժնի համար (որը պարունակում է մեզ զբաղեցնող հատվածը) նա գրավոր աղբյուր չի հիշում:

Մասուդին շատ է ճանապարհորդել: Նա եղել է Պարսկաստանում, Եգիպտոսում, Ջանգիրարում և շատ է հետաքրքրվել մինչ այդ անհայտ նորություններով: Օրինակ, նա հատուկ բաժին ունի կովկասյան (ալ-Կարկ) լեռնային շրջանների, ալանների (ալ-Լան), ժանարների (ալ-Մաննարիյյա) և այլոց մասին:

Մասուդին այցելել է նաև Հայաստան: Նա հիշում է, որ եղել է Միջին Հայաստանում (بوسائطه), որի մեջ չափանաբար պետք է մտնի նաև Վասպուրականը: Ամենայն Վասպուրականում արտեղ էլ նա լսել և գրի է առել Հայոց թագավորի ու Շամիրամի գրույցը¹⁷:

Բարեբախտաբար Մասուդուն ժամանակակից հայ պատմիչ Քովմա Արծրունին, նույնպես ծանոթ լինելով Վանա լճի շրջակայքում պատմվող Նաղարյան գրույցին, չափազանց հակիրճ ձևով ակնարկում է Լեզք գյուղի հետ առնչվող մի առասպել «և դաշիկ արարեալ յայնկոյս քան սՎանտոսպ, ի տեղուցն արձանաշար քարակարկառ գողաձն միջոցի երկուց ըրակաց, որ հայի յՈրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեղուոյ գեաղջն, որ գորացն գեղեցիկ առասպելարանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ»¹⁸:

Այս հետաքրքրական հատվածի վերջին աղավաղված տողերը նախ Ք. Պատկանյանը (մատմ) և ապա Մ. Արեղյանը²⁰ սրամիտ ձևով ուղղում են.

«...որ գԱրայն գեղեցիկ առասպելարանեն սպիանալ վիրացն սպանելոյն ի մանկանցն «Շամիրամայ»:

Քովմա Արծրունու հակիրճ տեղեկությունը վկայում է, որ Մասուդու ժամանակ Հայոց թագավորի՝ Արայի և Շամիրամի մասին գրույցը կենդանի էր ժողովրդի մեջ¹⁹: Խորենացին, իհարկե,

¹⁴ «Bibl. Geogr. Arab», VI, Lugd. Bat., 1889, էջ 17, 118:

¹⁵ C. Brockelmann, Geschichte der arabischen Litteratur, Weimar, 1898, I էջ 143—145:

¹⁶ И. Крачковский, Избранные сочинения, М.-Л., 1954, IV, էջ 117:

¹⁷ Մասուդի (արարերեն), Ա, էջ 10:

¹⁸ Մասուդին միակ արար մատենագիրը չէ, որ Բաղրատունյաց ժամանակաշրջանում Հայաստան է եկել: Աշոտ Ա-ի իշխանապետության տարիներին այցելել է պատմիչ Յակուրին, իսկ Արաս Ա-ի օրոք (մոտավորապես 950 թ.) եկել է Արու Գուլաֆր և այլն:

¹⁹ «Քովմայի վարդապետի Արծրունույ Պատմութիւն Տանն Արծրունեաց», Պետերբուրգ, 1887, էջ 215:

²⁰ Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 529—530:

²¹ Բանասերները (Մ. Էմին և Ն. Ակոնց) նկատել են, որ Արայի մահվան և հարության առասպելը արձագանք է գտել Պլատոնի «Հանրապետության» մեջ, ուր հիշվում է «էր հայր» «Վէպր Նուռն Հայաստանի», Մ. Էմինի «Ծրկասիրություններ», Մոսկվա, 1898, էջ 146: N. Adontz, Les vestiges d'un ancien culte en Arménie «Histoire d'Arménie», Paris, էջ 384:

սփելի մանրամասն է պատմում, թե ինչպես Հայոց թագավոր Արան մեռնում է «ի պատրագմին ի մանկանցն Շամիրամայ», և ապա երբ հայոց գործն ընդվզում է, նրան հանդարտեցնելու համար Շամիրամն ասում է՝ «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա և կենդանացի»:

Մասուդու խնդրո առարկա հատվածը միանգամ ևս միտում է Գ. Խալաթյանցի այն վարկածը, թե Մովսես Խորենացու և նույնիսկ Թովմա Արծրունու մոտ այս բոլորը հնարովի է, այսինքն ժողովրդի մեջ չի պատմվել: Եթե Թովմա Արծրունին տեղանունների հիման վրա «կրկնել» էր Խորենացու «հնարած»²² առասպելը, զարդարելու համար Վասպուրականի և Արծրունյաց պատմությունը, ապա Մասուդին չէր կարող այն փոխ առած լինել նրանցից, հենց միայն այն պատճառով, որ նրա պատմածը որոշ տեսակետից ուղղակի հակառակն է Խորենացու հաղորդած մանրամասնությունների (օրինակ, հայերը ոչ թե լրիվ պարտվում են, այլ ընդհակառակը ի վերջս նույնիսկ հաղթում):

Շամիրամի մասին զրույցը Վասպուրականում կենդանի է եղել նույնիսկ անցյալ դարում, որի մասին վկայում է Գ. Սրվանձտյանցը: Խոսելով սլաոմական Հեզր պուրի մասին, վերջինս շեշտում է. «Որ բևեռագիրներով քարեր լեցուն են. և ծուլածո հին պղնձե կենդանյաց փորրիկ արձաններ գտնվեցան մեր օրերը դեռ ևս քանի մը տարի առաջ, ուր և ինչեր կան և՛թե Հեզրաբերդիկը և անոր ստորոտները փորվեն քննվեն»:

Ապա Սրվանձտյանցը պատմում է²³ մի ժողովրդական զրույց, որը շատ կարևոր է մեր նյութի պարզարանման համար: Հեզր գյուղի մոտերքը եղել է թոնիրի ձևի մի փոս, որը գյուղացիք «սուրբ թոնիր» են կոչել: Այստեղ չրի մեջ եղել է մի կախարդական ձուկ, որը «կնկան կերպարանք ունի եղեր և արծաթե օղն ալ իր ջրին անցուցած կտեսնվի տակավին»: Դա եղել է մի երեցկին. մի օր թոնրի մոտ հաց թխելիս նրան է մոտենում մի աղքատ և հաց ու զինի ուզում նրանից, կինը տալիս է: Թշվառականը մի համբույր էլ է ուզում և երեցկինը վարանելուց հետո այդ էլ է տալիս: Նույն րոպեին երեցը ներս է մտնում. «Երեցկինը ամոթեն ու ահն ինքզինքն կձգե ի թոնիր կրակին մեջ. տերտերն ալ զինքն ի վրեն: Բայց տերտերը կը մրկի, իսկ երեցկինը՝ կրակն չուր դառնալով ինքն ալ ձուկ, Աստուծո հրամանքով հավիտենական հիշատակ կմնա նույն տեղ»:

Մ. Աբեղյանը²⁴ և ուրիշներ այստեղ տեսնում են շարունակությունը Դիոդորոս Սիկիլիացու հիշած Դերկեսոսի զիցուհու առասպելի, որն իր դուստր Շամիրամի ծնվելուց հետո հանցավոր սիրո պատճառով ձուկ է դառնում: Շամիրամի անունը չնչվել է դարերի ընթացքում, բայց մրենացել է հնադարյան հեթանոսական զրույցի բովանդակությունը, թեպետ և որոշ քրիստոնեական գունավորումով:

Բազրատունյաց ժամանակաշրջանում Արայի և Շամիրամի առասպելը դեռ կենդանի է եղել իր ամբողջական ձևով, դեռ պատմվել է նրա հիմնական բովանդակությունը՝ Հայոց թագավորի և Շամիրամի պատերազմը, վերջինիս հաջողությունները և շինարարական գործունեությունը, Արայի սպանությունը և հարություն փորձը արալեզների միջոցով²⁵:

Հնադարյան այս զրույցն ունեցել է նաև այլ մանրամասնություններ, որոնք պատմում է միայն Մասուդին: Բացի նրանից, որ նա սահման է դնում Շամիրամի ռազմական հաջողություններին (Անձևացյաց գավառից այս կողմ չի անցնում), Մասուդու հաղորդած պատմամբ վկայում է, որ Շամիրամի մահվանից հետո հայ թագավորները նույնիսկ հաղթեցին և հարկատու դարձրին Ասորեստանը: Մասուդու հաղորդածը գուտ հայկական մտայնության կնիքն է կրում, վերջնական և վճռական հաղթանակը նա վերագրում է Հայկական լեռնաշխարհի թագավորներին, որը, ի դեպ, պատմական իրողության շատ ավելի մոտ է, քան Դիոդորոս Սիկիլիացու և նույնիսկ Մովսես Խորենացու հաղորդած պատմումները:

²² Г. Халатьянц, Армянский эпос, Москва, 1896, էջ 131:

²³ «Գրոց ու բրոց և Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», ծրագրյաց Գ. վ. Սրվանձտյանց, Կ. Պոլիս, 1874, էջ 52—54:

²⁴ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 540:

²⁵ Բազրատունյաց և նրանց հաջորդող ժամանակաշրջանում Վասպուրականի կողմերում հիշում են Շամիրամի անվան հետ կապված տեղանուններ: Թովման հիշում է «րադարն Շամիրամայ» (Վանտոսպ) և «Շամիրամն կոչեալ բերդ» (Թովմա Արծրունի, էջ 63, 281), իսկ արար աշխարհապետ Յակուար (ԺԳ դ.) հիշում է Շամիրամ բերդ և Շամիրան՝ Հարավային Հայաստանում («Jacut's Geographisches Wörterbuch», 1924, III, էջ 324):

Շամիրամը իրոք պատմական անձնավորություն է: Պատմական աղբյուրները վկայում են, որ եղել է Շամուրամաթ (812—803) անունով թագուհի, որի օրոք Հայկական լեռնաշխարհի՝ Ուրարտուի թագավոր Մենուան (810—781) պատերազմել է Ասորեստանյան այս թագուհու և նրա սրղու՝ Աղաղնիրարիի դեմ²⁶, բայց ի վերջո ոչ թե պարտվել, այլ հաղթել է իր ախոյանին և նրա ու հաջորդների օրոք ուրարտացիք նվաճել և հարկատու են դարձրել Վանա լճից հարավ ընկած գավառները, հասնելով մի կողմից Ուրմիո լճի հարավային ափերը, իսկ մյուս կողմից՝ Հյուսիսային Ասորիք:

Արայի և Շամիրամի մյուս պատումները (Սիկիլիացու և խորենացու) ոչ միայն լիակատար հաղթանակն են Շամիրամին վերագրել, այլև նույնիսկ Մենուայի շինարարական գործունեությունը (նշանավոր ջրանցքը):

Հայոց թագավորի և Շամիրամի դրույցի Մասուդու կողմից հաղորդված պատումը²⁷ ըստ էության շատ հարազատ է հայկական միջավայրին, իսկ նրա գոյությունը վկայում է, որ այս առասպելապատում գրույցի մեջ պատմական իրողությունը հայ ժողովրդի բերանում այնքան էլ չի կերպարանափոխվել: Թեև Ասորեստանը որոշ հաջողություն է ձեռք բերում, այնուամենայնիվ, «Հայոց թագավորները» հաղթում են և նույնիսկ հարկատու դարձնում Ասորեստանը: Այստեղ ևս երևան է դուրս վիպական տարրը, բայց հօգուտ Հայկական լեռնաշխարհի բնակիչների: Այն հանգամանքը, որ թշնամին հասնում է միայն Անձևացյաց գավառը և չի մտնում Վասպուրականի խորքերը կամ նույնիսկ Վանա լճի հարավային կողմերը, որոշ հիմք է տալիս ենթադրելու, որ այս պատումը Վասպուրականի տեղական հայրենասիրության կնիքն է կրում:

Արայի և Շամիրամի հայկական հնադարյան առասպելը, ըստ երևույթին, ունեցել է մի քանի պատումներ, որոնցից մեկն է, որ հաղորդում է Մասուդին: Դա իր հիմնական գծերով պատմվել է դեռ Բաղրատունյաց ժամանակաշրջանում և այնքան տարածված է եղել, որ նույնիսկ արաբ ճանապարհորդի ուշադրությունն է գրավել:

²⁶ В. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 63—65:

²⁷ См. Н. Марр. К критике истории Моисея Хоренского, отгиск из № 1 и 2 «Византийского Временника», 1898, էջ 3: